



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 6/3-Ա

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ

Ք.Երևան
Ժ.11.00

18 նոյեմբերի 2011թ.

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի՝ 2011 թվականի նոյեմբերի 18-ին գումարված Երևանի ավագանու հանդիսավոր նիստում տեղի ունեցավ Երևանի նորընտիր քաղաքապետ Տարոն Մարգարյանի երդմնակալության արարողությունը:

Հանդիսավոր նիստին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, Ամենայն Հայոց կաթողիկոսը, Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաներ, Երևան քաղաքի ավագանու անդամները, Երևանի նախկին քաղաքապետներ, Երևանի պատվավոր քաղաքացիներ, պետական, հասարակական, քաղաքական, մշակութային գործիչներ /ցանկը կցվում է/:

Նիստը վարում էր Երևանի ավագանու ավագ անդամ Աստղիկ Գևորգյանը:

Երևանի նորընտիր քաղաքապետ Տարոն Մարգարյանը երդվեց քաղաքապետի լիազորությունները իրականացնելու ընթացքում պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, Երևանի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել Երևանի քաղաքապետի լիազորությունները, ծառայել Երևանի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Համաձայն Երևանի ավագանու կանոնակարգի 125-րդ կետի՝ Երևանի քաղաքապետի երդման ստորագրված տեքստն ի պահ հանձնվեց Երևան քաղաքի պատմության թանգարանին /կցվում է/:

Երևանի պատվավոր քաղաքացի, Երևանի ավագանու անդամ Մարտին Վարդազարյանը Երևանի քաղաքապետի խորհրդանիշ հանդիսացող լանջաշղթան՝ հայոց տասներկու մայրաքաղաքների անվանատառերով, հանձնեց նորընտիր քաղաքապետ Տարոն Մարգարյանին:

Պաշտոնապես իր պարտականությունները ստանձնած քաղաքապետ Տարոն Մարգարյանին շնորհավորեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ արքեպիսկոպոսը, Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Մարգարյանը:

Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանը նիստը հայտարարեց փակված:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

**Արձանագրեց՝
Ն. Ղուկասյանը**